ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՆՑԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2023/23Շ

ք. Երևան «20» 06 2023թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Հ3, Երևան-Գառնի-Գեղարդ ավտոմոբիլային ճանապարհի սողանքային կմ15+000-կմ16+800 հատվածի անցանելիության ապահովման ամենամյա աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.1.4 Եթե Կատարողը երկու անգամ անընդմեջ թույլ է տալիս ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված խախտումները և դրանք չի վերացնում նույն աղյուսակում նշված ժամկետում, ապա Պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, սեփական մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով:

2.4.5 Պայմանագրի գործողության ընթացքում իրականացնել ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը **յուրաքանչյուր ամիս մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը** Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1): ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N710-Ն հրամանով հաստատված փաստաթղթերը և հանձնման ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 39 342 737 (երեսունինը միլիոն երեք հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում: **ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված յուրաքանչյուր թերության վերացման համար սահմանված ժամկետի խախտման համար գանձվում է տուգանք նույն հավելվածի 4-րդ աղյուսակով սահմանված չափով և տույժ՝ թերության վերացման համար 3-րդ աղյուսակում սահմանված ժամկետի ուշացված յուրաքանչյուր օրվա համար՝ սպասարկվող ճանապարհահատվածի 1 կմ արժեքի 0.05 տոկոսի չափով:**

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Պայմանագրի կատարումը փուլային է և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված չէ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ: Յուրաքանրյուր ամիս ներկայացված կատարողականին համամասնորեն որակավորման ապահովման գումարը ենթակա է նվազեցման:

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	"Կոտայքի ՃՇՇ" ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3,	Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	1-ին փ, 58շ
Հ/Հ 900011012136	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02815457	Հ/Հ 115000283040100
Գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ 03501115
Ա. Երիցյան	Տնօրեն
	Գ. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 20 » 06 2023 թ. կնքված
***ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2023/23Շ** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը
1	45231177/69	Ստորև	դրամ	**39 342 737**	1	Համաձայն բնութագրի	Պայմանագրի կնքման պահից մինչև 2023 թվականի նոյեմբերի 15-ը ներառյալ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՅ, Երևան-Գառնի-Գեղարդ ավտոմոբիլային ճանապարհի սողանքային կմ15+000-կմ16+800 հատվածի անցանելիության ապահովման ամենամյա աշխատանքների իրականացման ձեռքբերում

ՀՅ, Երևան-Գառնի-Գեղարդ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի սողանքային կմ15+000-կմ16+800 հատվածի անցանելիության ապահովման աշխատանքների կատարման կապալի պայմանագրի գործողության ընթացքում կատարողը պարտավոր է՝

1. Ապահովել ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները:

2. Աշխատանքների կատարման ժամանակ առաջնորդվել իրավական ակտերի, շինարարական նորմերի, ստանդարտների պահանաջներով:

3. Ապահովել ստորև թվարկված պահանջները՝

-3 մետրանոց երկարությամբ չորսվակի տակ բացակի չափսը պետք է լինի ոչ ավելին քան 10սմ
-Զթողնել փոսեր երթևեկելի մասի և մայթերի վրա
-Կողնակը բարձր կամ կողնակը ցածր երթևեկելի մասի եզրից չպետք էլինի ավելի քան 5սմ
-Կողային առուները կամ վաքերը պետք է մաքրված լինեն ջրի բերվածքներից և լանջերի թափվածքներից
-Մաքրել աղբը և օտար առարկաները ճանապարհի օտարման շերտի սահմաններում
-Մաքրել խողովակները բերվածքներից և տիղմի նստվածքներից
-Թույլ չտալ թեքված, ծռված և վնասված ճանապարհային նշանների առկայությունը
-Թույլ չտալ թեքված կամ չներկված կարճասյունների առկայությունը

4. Պայմանագրի գործողության ողջ ընթացքում կապալառուն պարտավոր է ապահովել ավտոմոբիլային ճանապարհների, **ճանապարհային կահավորանքի** պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկված ժամանակ տրանսպորտի շուրջօրյա անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին, աշխատանքների ընթացքում երթևեկության

կազմակերպման անվտանգության բարելավման նպատակով պատասխանատուի հանձնարարությամբ, տեղադրել լրացուցիչ կահավորանքի միջոցներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

"Կոտայքի ՃՇՇ" ՍՊԸ
Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ, 1-ին
փ, 58/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115000283040100
ՀՎՀՀ 03501115
Տնօրեն
Գ. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Հավելված N 1.1
«20» 06 2023 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2023/23Շ ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆԸ

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանում	Միավորի ձեռքբերման համար առավելագույն արժեք տարեկան /ՀՀ դրամ/
1	*2*	*3*
1	ՀՅ, Երևան-Գառնի-Գեղարդ ավտոմոբիլային ճանապարհի սողանքային կմ15+000-կմ16+800 հատվածի անցանելիության ապահովման ամենամյա աշխատանքների իրականացում	**39 342 737**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
"Կոտայքի ՃՇՇ" ՍՊԸ
Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ, 1-ին
փ. 58/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115000283040100
ՀՎՀՀ 03501115
Տնօրեն
Գ. Հովհաննիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.2
«20» 06 2023 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2023/23Շ ծածկագրով պայմանագրի

ՀՅ Երևան Գառնի-Գեղարդ ավտոճանապարհի սողանքային կմ 15+000-կմ16+800 հատվածի անցանելիության ապահովում, Տեղային նախահաշիվ 1-1 Ճանապարհային հագուստի նորոգում

Կազմված է 2023(4)թ. գներով.

Նախահաշվային արժեքը **32785,6** հազ.դրամ

Հ/հ	Գնացուցակների NN	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը: Աշխատավարձը (տուր) /(հազ.դրամ)	Միավորի արժեքը: Մեքենաների շահագործում (տուր) (հազ.դրամ)	Միավորի արժեքը: Նյութեր: Չափման միավորը	Միավորի արժեքը: Նյութեր: Նյութերի ծախսը	Միավորի արժեքը: Նյութեր: Նյութերի արժեքը (հազ.դր)	Միավորի արժեքը: Նյութեր: Միավորի վրա ծախսված նյութերի արժեքը (հազ.դր)	Միավորի արժեքը: Միավորի ընդհանուր արժեքը (հազ.դր)	Ընդհանուր արժեքը (հազ.դր): Աշխատավարձը	Ընդհանուր արժեքը (հազ.դր): Մեքենաների շահագործումը	Ընդհանուր արժեքը (հազ.դր): Նյութերի արժեքը	Ընդհանուր արժեքը (հազ.դր): Ընդհանուրը
					2,1973	3,1706				1,141					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
		Ի.Երթևեկելի մաս													
1	1-1588 22-10	Ճանապարհային պատվաշքի քանդում և բարձում Էկս.0,65մ³ շ.տ. ա/ի խիճ	1000մ³	0,123	8,27 18,17	203,32 644,64	մ³	0,06	1,50	0,103 0,10	662,92	2,2	79,3	0,01	81,5
2	տեղապ. գնացուց.	Շինաղբի տեղափոխում լցակույտ 10կմ հեռ. վրա	տն	270,6		0,417					0,42	0,0	112,8	0,00	112,84
3	1-1605 25-3	Աշխատանք լցակույտում, IVկ խիճ	1000մ³	0,123	1,74 3,82	13,35 42,33	մ³	0,06	1,50	0,103 0,10	46,25	0,5	5,2	0,01	5,69
4	27-43 11-1-5	Խճային հիմքի իրականացում h=8-16սմ խիճ 40-70մմ	100մ²	0,82	1,74 3,82	11,06 35,07	մ³	15,12	4,00	76,37 69,01	115,26	3,1	28,8	62,6	94,5

		խիճ 10-20մմ ջուր					մ³ մ³	1,5 3,0	4,00 0,15	6,85 0,51					
5	27-251 63-1	Բիտումի լցաքաշխում (4.12 տ 1000մ²) ջրիկ բիտում	տն	0,338		2,20 6,98	տն	1,03	165,50	194,501 194,50	201,48	0,0	2,4	65,7	68,1
6	16-4-Բ	Փոսային նորոգում h=3-5սմ մանրահատիկ ա/բ ջրիկ բիտում	100մ²	12,50	32 70,31	4,344 13,77	տն տն	9,52 0,056	27,00 243	303,15 287,63 15,53	387,24	878,9	172,2	3789,43	4840,50
	տեղափ. գնացուց.	Շինարարական աղբի բարձում, տեղափոխում 10 կմ հեռ. վրա	տն	89,00	0,15 0,33	- 0,417					0,75	29,3	37,1	0,00	66,45
7	16-4-Բ 16-6-Բ	Փոսային նորոգում h=6սմ խոշորահատիկ ա/բ ջրիկ բիտում	100մ²	4,94	46 101,07	5,645 17,90	տն տն	14,25 0,075	26,00 165,5	428,75 414,59 14,16	547,72	499,3	88,4	2118,0	2705,8
	27-43 11-1-5	Խճային հիմքի իրականացում h=8-16սմ խիճ 40-70մմ խիճ 10-20մմ ջուր	100մ²	8,94	1,74 3,82	11,06 35,07	մ³ մ³ մ³	15,12 1,5 3,0	4,00 4,00 0,15	76,37 69,01 6,85 0,51	115,26	34,2	313,5	682,7	1030,4
	27-251 63-1	Բիտումի լցաքաշխում (4.12 տ 1000մ²) ջրիկ բիտում	տն	3,683		2,20 6,98	տն	1,03	165,50	194,501 194,50	201,48	0,0	25,7	716,4	742,1
	տեղափ. գնացուց.	Շինարարական աղբի բարձում, տեղափոխում 10 կմ հեռ. վրա	տն	52,86	0,15 0,33	- 0,417					0,75	17,4	22,0	0,0	39,5
8	27-28 8-4	Հարթեցնող շերտի իրականացում ա/բ խառ- նուրդից h=3սմ մանրահատիկ ա/բ	տն	59,7	0,12 0,26	0,53 1,68	տն	1,01	27,00	30,515 30,52	32,46	15,74	100,3	1821,8	1937,8
9	27-164 27-165 39,40-1,2	Ծածկի իրականացում մանրահատիկ խիտ տաք ա/բ h=5սմ տիպ "Б" մանրահատիկ ա/բ	100մ²	34,60	2,086 4,58	4,74 15,03	տն	12,16	27,00	367,390 367,39	387,00	158,6	520,0	12711,7	13390,3
		II.Կողնակներ													
1	27-229 51-13	Կողնակների ամրացում ավազակոպիճով. hմիջ=16սմ	100մ²	3,28	1,67 3,67	4,77 15,12				25,587	44,38	12,0	49,6	83,9	145,6

		ավազակոպճային խարնուրդ					մ³	6,2	3,6	25,47					
		ջուր					մ³	0,7	0,15	0,12					
		IV.Անվտանգության էլեմենտներ													
1	նամակ	Նոր պոլիմերային ազդանշանային սյուների տեղադրում, (C1)	հատ	20	- 0,06	- 0,08				3,49	3,63	1,20	1,56	69,83	72,59
		ազդանշանային սյուն					հատ	1	3,06	3,49					
		Ընդամենը										1652,557	1558,847	22122,150	25333,554
		Ընդամենը ինտենսիվության k=1.2 և, մեքենաների շահագործման k=1.05 գործակիցներով										1983,069	1964,147	22122,150	26069,366
		Վերադիր ծախսեր 13.3%													3467,226
		Ընդամենը													29536,591
		Շահույթ 11%													3249,025
		Ընդամենը													32785,617
		ԱԱՀ 20 %													6557,120
		Ընդհանուր արժեքը													39342,737

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

"Կոտայքի ՃՇՇ" ՍՊԸ
Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ, 1-ին փ. 58շ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115000283040100
ՀՎՀՀ 03501115
Տնօրեն
Գ. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«20» 06 2023 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՍՇՁԲ-2023/23Շ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**Գնման ենթակա աշխատանքների անվանումը**	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը տարի**
1	45231176/69	Հ3, Երևան-Գառնի-Գեղարդ ավտոմոբիլային ճանապարհի սողանքային կմ15+000-կմ16+800 հատվածի անցանելիության ապահովման ամենամյա աշխատանքների իրականացում	...		...	...	...	...	39 342 737	39 342 737	39 342 737	39 342 737	39 342 737	39 342 737	**39 342 737**

ՀՀ դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
"Կոտայքի ՃՇՇ" ՍՊԸ
Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ, 1-ին
փ. 58/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115000283040100
ՀՎՀՀ 03501115
Տնօրեն
Գ. Հովհաննիսյան

Հավելված N 3
«20» 06 2023 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2023/23Շ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 20 » 06 2023 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2023/23Շ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն